



\* կիր. 1 Յուն.— Ս. Պատրիարք մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մէր մատուռին մէջ։ Ժամարարն էր Հոգլ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։

\* Դէ. 4 Յուն.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց չքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ պաշտուած հանդիսաւոր նախատօնակին եւ ապա թափօրով եւ «Օրէնեցէք զԾէր» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան։

\* Եշ. 5 Յուն.— Ս. Դաւիթի մարգարէին եւ Յակոբայ Տեառնեդրայր առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Արքունոյ Երուսաղէմի)։ Հոստ սովորութեան, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, առաւոտեան ժամերգութեան ընթացքին, շուրջառ եւ ևմիսարոն առնելով բարձրացաւ Տեառնեզրոր Աթոռի պատուանդանին, ուր ժամերգութեան աւարտին ընդունեց Միաբանութեան շնորհաւորութիւններ։ «Քը իսոտոս Աստուած մէր» մաղթանքի ընթացքին, Լուսարարակետ Գեր։ Տ. Հայրիկ Արքեպօս. Ասպանեան մաղթանքներ ըրաւ Ն. Ամենապատութեան արեւշտութեան եւ բարօր ու երկար զահակալութեան համար։ Նոյնը ըրաւ օրուան պատարագէր՝ Գեր։ Տ. Շահէ Արքեպօս. Ամէմեան, որ նաև ուղղակի ըրաւ երկու տօնելի սուրբերու կեանքին, առաջինին քաղաքական, իսկ երկրորդին բարոյական ու Հոգեւոր մարգին մէջ արձանագրած յաջողութիւններուն։ Քարոզէն ետք, Լուսարարակետ Միաբանը նախագահեց Ս. Աթոռի հանդուցեալ Պատրիարքներու Հոգիներուն համար կատարուած մասնաւոր պաշտամունքին։

\* Աւր. 6 Յուն.— Ս. Ստեփանոսի հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախադասէց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը։ Տօնին բուրժապակիր վարդապետներն էին Հոգլ. Տ. Աւեան Վրդ. Դարիսկեան և Հոգլ. Տ. Ասպետ Արդ. Պայեան։

\* Շր. 7 Յուն.— Ս. Ստեփանոսի նախավկային։ Առաւոտեան ժամերգութեան ընթացքին, ըստ սովորութեան, կատարուեցաւ սարկաւագներու մասնաւոր հանդէօր, նախադասէութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր։ Անոնք, Յարկաւագներ եւ ուրարակիրներ, մարգարտազարդ սաղմաւրտներով եւ տարակաւակ ու բուրժան ի ձեռին, կատարեցին ժամերգութեան երկրորդ բաժէնը։ Ազա Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Ստեփա-

նոսի սեղանին վրայ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Սեւան Վրդ . Ղարիսկեան :

\* Կիր . 8 Յուն . — Ա . Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա . Յովհ . Վարտապետի խորանին վրայ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Բարսեղ Արդ . Գալէմ-սէրեան :

— Գլխաւոր առաքելոց՝ Պետրոսի եւ Պօղոսի հանդիսաւոր նախատօնակին ի Ա . Յակոբ նախագահց Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեան :

\* Բջ . 9 Յուն . — Ա . Ալաքելյան Պետրոսի եւ Պօղոսի : Ա . Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա . Պետրոսի վերնամատուուին մէջ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Վահան Վրդ . Թօփալեան :

— Որդւոց Որոտման հանդիսաւոր նախատօնակին ի Ա . Յակոբ նախագահց Գերշ . Տ . Շահէ Արքեպոս . Աճէմեան :

\* Գջ . 10 Յուն . — Տօն Ա . Որդւոցն Որոտման Յակոբայ առաքելոյն ի Յուլիանու աւետարանին : Օրուան հանդիսաւոր Ա . Պատարազը՝ Մայր Տաճարի Ա . Գլխադրի մատուուին մէջ մատոյց եւ առա , ամպհովանիի ներքեւ եւ կենաց Փատոսի մատունքն ի ձեռին , Մայր Տաճարին մէջ կատարուած երրադարձ մեծահանդէս թափօրին նախագահց Գերշ . Տ . Շահէ Արքեպոս . Աճէմեան :

\* Եր . 14 Յուն . — Նոր Տարի (1978) , Կաղանդ , ըստ Հիմ Տումարի եւ Ա . Քարունի հայրապետին : Կէս զիշերին , Մայրավանքի մեծ զանգը ուրախ գանդիւնչութիւնում կատարէ կամաց Տարիին :

Առաւոտուն , Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ Ա . Պատարազ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Գէորգ Վրդ . Նազարեան : Ազա , «Ուրախացիք պսակ կուսին» շարականը երգելով Միաբանութիւն եւ ժողովուրդ թափօրութարձրացան Պատրիարքարան , ուր Ն . Ամեն . Ա . Պատրիարք Զօր ուղղուած որոտարուի ուղերձ մը արտասանեց Ա . Թարգմանչաց Վարժարանին փոքրիկ մը , ծաղկեցիւնչ ի ձեռին : Ն . Ամենապատուութիւնը խօսք առնելով մաղթեց որ ծագող տարին խաղաղութիւնը երբէ խառվայոյց այս աշխարհին , եւ իրականացրնէ այն լոյսերը՝ որոնք խաղաղութեան արշալոյս մը աւետել փորձեցին : Յետոյ , ըստ սովորութեան , մէկական նարինջ բաժնեց բոլորին :

\* Կիր . 15 Յուն . — Ա . Պատարազը մատուցուեցաւ Ա . Յարութիւն , Վերնատան մեր մատուուին մէջ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Առուրէն Վրդ . Յուգակիմեան : Ա . Թարգմանչաց Վարժարանի աշակերտութիւնը Ա . Հաղորդութիւնը ըստացաւ :

\* Գջ . 18 Յուն . — Ճրագալոյց Ա . Նենիկեան : Առաւոտեան Ժամը 10ին , Ամեն . Պատրիարք Ա . Զօր զիխաւորութեամբ , Միաբանութիւնը ինքնաշարժներու շարժնով մը ճամբայ ելաւ Մայրավանքի դռնէն զէպի Ա . Նենիկեան քաղաքը՝ Բէթղեհէմ : Ճամբու կէսին , Յունաց Ա . Եղիա վանքին զիմաց թափօրը կանդաւ , ուր զիմաւորութեան եկած էին Բէթղեհէմի եւ շրջակայքի քաղաքական կարգ դադարէ մը եւ պատուասիրութենէ ետք , հեծելագօրաց առաջնորդութեամբ , թափօրը շարունակեց իր ճամբան եւ Ժամը 11ին հասաւ Ա . Մընդեան հրապարակը որ լեցուն էր ժողովուրդի բազմութեամբ : Արիներու եւ արենոյներու խումբեր , հայ թէ օտարազգի , արդէն իսկ կը առզանցէին հրամագրակին յայնքին եւ երկայնքին : Ժառանգաւոր սաներ եւ զպիրներ «Խորհուրդ» մեծքը երգեցողութեամբ առաջնորդեցին Ն . Ամենապատուութիւնն ու Միաբանութեան անդամները մեր վանքը , որու Տեսչարանին մէջ օտար հիւրերը պատուասիրուեցան :

— Կէսօրէ ետք ժամը 2·30ին , Ամեն . Պատրիարք Ա . Զօր զիխաւորութեամբ , կատարուեցաւ «Հրաչափառ»ի հանդիսաւոր մուտք Ա . Մննդեան Տաճար : Ա . Այրի ուխտէն ետք , Տաճարի հայկական բաժնին մէջ կատարուեցան ձաշու եւ

երեկոյեան ժամերգութիւններ : Ծննդոց եւ Մարգարէութիւններու Գիրքերու ընթերցումներէն ետք, ձրագալոյցի Ս . Պատարազ մատուցուեցաւ Ս . Ալրին մէջ : Ժամերարն էր Հողէ . Տ . Ասպետ Արդ . Պալեան : Ապա , Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեանի գլխաւորութեամբ կատարուեցաւ Ս . Ծննդեան նախատօնակ , որմէ ետք Միաբանութիւն եւ զպիրներ «Խորհուրդ մէծ» երգելով եւ անցնելով Տաճարի սիւնազարդ զաւիթէն՝ բարձրացան Ս . Ծննդեան Հայավանաբարձր , որու բակին մէջ կատարուած Ս . Աւետարանի ընթերցումէն եւ «Փառք ի բարձրնոսիք երգեցողութենէն ետք բոլորն ալ նստան ընթրիքի :

— Գիշերուան ժամը 10ին , Ս . Ծննդեան Տաճարի Հայկական զանդերու խորհուրդ զօղանիքը ուրքի Հանած է արդէն բոլորը եւ կէս ժամ ետք ընթացք կ'առնեն դիշերային եւ առաւօտեան պաշտամունքները Տաճարի Հայկական բաժնին մէջ :

\* Եշ . 19 Յուն . — ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՑԱՑՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՄԻՆ ՄԵՐՈՅՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ : Կէս գիշերին , Ամեն . Պատրիարք Ս . Հօր Վըլիաւորութեամբ , Միաբանութիւնը իջաւ Ս . Ծննդեան Այրը , ուր կատարուած արարողութիւնները , մէկ ժամուան տեսողութեամբ , ճայնասփռուեցան իսրայէլեան ուստիոկայանէն : Այդ միջոցին Ն Ամեն . Պատրիարք Ս . Հայրը տուաւ համայն Հայութեան ուղղուած Ս . Ծննդեան իր պատզամը , որ կ'երեւի Ախուսի ներկայ թիւին մէջ : Սոյն արարողութեան ներկայ գտնուեցան Երուսաղէմի եւ Բեթղեհէմի վահմ . Քաղաքապետները , Բեթղեհէմի Զին . Կառավարիչը , Գերսանական Դեսպանը եւ այլ բարձրաստիճան հիւրեր , որոնք ապա չնորհաւորեցին . Ամենապատուութիւնը եւ մեկնեցան : Ասկէ անդին մատուցուեցան գոյզ պատարազներ , առաջինը Տաճարի Հայկական բաժնին մէջ , Հողէ . Տ . Հայկապուն . Արդ . Մելգոննեանէ , իսկ երկրորդը Ս . Ծննդեան Այրին մէջ՝ Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեանէ , որ եւ նախազահեց զոյդ պատարազներու միջեւ կատարուած «Քրօրհնէք» Հանդիսաւոր արարողութեան : Առաւօտեան դէմ , արարողութեանց աւարտին , Միաբանութիւն եւ զպիրներ , երէկուան նման , «Խորհուրդ մէծ» շարականի երգեցողութեամբ սիւնազարդ զաւիթէն անցնելով բարձրացան Ս . Ծննդեան Հայավանքը , ուր Ս . Աւետարանի ընթերցումէն ետք բոլորն ալ նստան նախաճաշի :

Ինչպէս երէկուան ձրագալոյցին , այսօրուան պատարազներուն ալ իր մասնակցութիւնը բերաւ Ս . Յակոբեանց Երգչախոսումը , ղեկավարութեամբ Ս . Աթոռափ Դպրամետ Պր . Աւհակ Գալայճեանի :

— Կարճ զաղարէ մը ետք , Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեանի գլխաւորութեամբ , Միաբանութիւնը ճամբար երաւ դէպի Երուսաղէմ , ուր Հասաւ ժամը 8-ին եւ «Խորհուրդ մէծ» շարականը երգեցողութեամբ բարձրացաւ . Պատրիարքարան :

— Իսկ Երուսալիմի մէջ , ձրագալոյցի արարողութիւնը կատարուեցաւ Ս . Յարութեան Տաճարին մէջ , Քրիստոսի Ս . Գերեզմանին առջեւ : Իսկ Ս . Պատարազը Ս . Գերեզմանին վրայ ժամուց Հողէ . Տ . Ասկի Արդ . Որդիքեան : Ս . Ծննդեան նախատօնակին նախազահեց Տաճարին Տեսուչը՝ Հողէ . Տ . Վաղարչ Վրդ . Խաչատուրեան :

— Իսկ Ս . Ծննդեան առաւօտուն , ժամը 5ին , Մայր Տաճարին մէջ պաշտուեցան զիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ : Ս . Պատարազը Աւագ Սեպանին վրայ ժամուց , ըստ սովորութեան , Ս . Հրեշտակապետաց վանքի Տեսուչը՝ Հողէ . Տ . Աւեան Վրդ . Պարիպեան : Լուսաբարապետ Գերշ . Տ . Հայրիկ Արքապու . Ասլաննեան նախազահեց «Քրօրհնէք»ի սրտապրաւ արարողութեան :

— Կէսօրէ ետք , Մայր Տաճարին մէջ պաշտուած նախատօնակին նախազահեց Գերշ . Տ . Շահէ Արքեպս . Աճէմեան :

\* Արք. 20 Յուն.— Յիշատսկմեռելոց: Բառ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Աւագ Թարզմաննը՝ Հոդը. Տ. Վահան Վրդ. Թօփայեան: Յետու: Կատարուեցաւ Հոգեհանդասութեան պաշտամունք՝ նախագահութեամբ Լուսարաբագետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ասլանեանի:

\* Շր. 21 Յուն.— Գ. օր Նենդեան: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Գլխագորի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոդը. Տ. Մանուէլ Արդ. Երկաթեան:

\* Կիր. 22 Յուն.— Դ. օր Նենդեան: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոդը. Տ. Վահան Վրդ. Թօփայեան:

\* Դ. 25 Յուն.— Նախատօնակին ի Ա. Յակոր նախագահց Գերշ. Տ. Շահէ Արքական. Աձէմեան:

\* Եշ. 26 Յուն.— Տօն Ամուանակոչութեան Տեան: Առաւոտեան ժամը 8.30-ին, Գերշ. Տ. Շահէ Արքեանս. Աձէմեանի զիխաւորութեամբ, Միարանութիւնը «Հրաշակառապով մուտք զործեց Ա. Յարութեան Տաճար, ուր Գերշ. Հանդիսապետ Սրբազնը մատոյց օրուան Հանդիսաւոր Ա. Պատարագը Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ և Ա. Հաղորդութիւնտուաւ Ժառանդաւոր սաներուն: Վահագի վերադարձին, Հայոց թաղի մուտքն, «Լոյս ի լուսոյք շարականի երդեցողութեամբ, Միարանութիւնը յառաջացաւ և բարձրացաւ Պատրիարքարանի դահնիճը, ուր Ամեն. Պատրիարք Ա. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Տրնօրհնէքը»ի արարողութիւն: Օրհնուեցան Ա. Աթոռի բարիքները և երդուեցան Մինդեան և Մկրտութեան շարականներ: Յետոյ, Ժամօրհնող Հոդը. Տ. Յովուի Վրդ. Մամուրի զիխաւորութեամբ, թափօրը մեկնեցաւ վանքի սեղանատուն ու խոհանոցը, ուր ևս կրկնուեցաւ նոյն արարողութիւնը և ի միջի այլոց օրհնուեցաւ օրուան յատուկ հերիսայի աւանդական ճաշը:

\* Արք. 27 Յուն.— Յովիչ. Կարապետի ծննդեան Հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Լուսարաբագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեան. Ասլանեանի:

\* Շր. 28 Յուն.— Տօն Նենդեան Սրբոյն Յովիհաննու Կարապետին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին աջակողմբ զանուող Ա. Յովիչ. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոդը. Տ. Գեղարդ Արդ. Տաւուալյարեան:

\* Կիր. 29 Յուն.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոդը. Տ. Բարսեղ Արդ. Գալէմաէրեան:

\* Կիր. 4 Փետր.— Ա. Հայրապետացն՝ Արամասի և Կիւրդի: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխագիր: Ժամարարն էր Հոդը. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

\* Կիր. 5 Փետր.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոդը. Տ. Վահան Վրդ. Թօփայեան:

\* Շր. 11 Փետր.— Ա. Գրիգորի Աստուածարանին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխագիր: Ժամարարն էր Հոդը. Տ. Աթուրէն Վրդ. Յովիակիմեան:

\* Կիր. 12 Փետր.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոդը. Տ. Ասպետ Արդ. Պալւան:

\* Շր. 18 Փետր.— Ա. Որդուց և Թոռանց Ա. Գր. Լուսաւորչին մերոյ: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխագիր: Ժամարարն էր Հոդը. Տ. Մանուէլ Արդ. Երկաթեան:

\* Կիր. 19 Փետր.— Բարեկենման Առաջաւորի պահոց : Ա . Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ : Ժամարարն էր Հոգէ . Տ . Հայկազուն Արդ . Մելքոնեան :

— Եսոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ եւս մատուցուեցաւ Ա . Պատարագ : Ժամարարն էր Հոգէ . Տ . Մանուէլ Արդ . Երկաթեան :

\* Ուր. 24 Փետր.— Ծիշասոկ Յովինանու մարգարէին : Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Ա . Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Յովինանու մարգարէութեան զրքին ընթերցումը :

— Ա . Մարգսի նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ : Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ . Տ . Հայրիկ Արդ . Ասլանեան :

\* Շր. 25 Փետր.— Ա . Մարգսի օրավարին : Ա . Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա . Մարգիսի մատուռին մէջ, որ հնագոյն մասը կը նկատուի Մայր Տաճարին : Ժամարարն էր Հոգէ . Տ . Յովսէփ Վրդ . Մամուր : Ա . Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան Համաձայն, կատարուեցաւ Հոգէ հանդսատեան պաշտօն՝ ազգային մեծ եւ հանգուցեալ բարերար Գայուսու Կիւլ պէնկեանի հօր՝ Մարգիսի հոգևոյն Համար : Հանդիսարաբետն էր Հոգէ . Տ . Վահան Վրդ . Թօվիալեան :

\* Կիր. 26 Փետր.— Ա . Պատարագը մատուցուեցաւ Ա . Յարութեան Տաճարի մերնատան մէր մատուռին մէջ : Ժամարարն էր Հոգէ . Տ . Սեւան Վրդ . Դարիկեան :

— Տեսանընդառաջի մեծահանդէս նախատօնակին եւ անոր յաջորդող առաջին «Անդաստան»ին ի Ա . Յակոր նախագահէց Լուսարարապետ Գերշ . Տ . Հայրիկ Արքեպիսկոպոս Ասլանեան :

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեղեցէ»ի եւ Հնկման Ա . Մարարութիւններուն նախագահէց Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեան : Հըսկումն էումէն ետք, Ժառանգաւորաց հին վարժարանի մարգադաշտին վրայ կը վտուէր Տեսոննդանի աւանդական կրակը :

\* Բշ. 27 Փետր.— Տեսոննդառաջ : Օրուան հանդիսաւոր Ա . Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեան, անդրադառնալով մեր զարաւոր արիւնոտ պատմութեան թագքին Հայ մայրերուն կատարած նախախմամական դերին եւ կոչ ողողեց մեր օրիերու Հայ մայրերուն հետեւելու անոնց օրինակին, ազգային առողջ դիտակցութեամբ նոր սերունդներ հասցնելու Համար :

### ՀՕՅԻ ԱՇԱՐԱԿ

### ԱՇԱՐԱԿ ԱՐԱՐ

### ԱՇԱՐԱԿ ԱՐԱՐ